# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

**« ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/04 » ԳՀ գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի**

ք.Վեդի, Գայի 2

2024-01-08-ին ժամը 14:00

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ՝ Սամվել Խաչատրյան (ԳԱՊ)
Հանձնաժողովի անդամներ՝ Հասմիկ Գաբրիելյան (ԳԱ)
Անդրանիկ Հակոբյան (ԳԱ)
Գևորգ Գաբրիելյան (ԲԱ)
Անուշիկ Մանուկյան (ԲԱ)
Հանձնաժողովի քարտուղար՝ Լուսինե Բաղինյան (ԳՀԱ)

**1.Հայտերի բացման մասին**
Սամվել Խաչատրյան

Հայտերի բացումը տեղի է ունեցել էլ. գնումների՝ armeps.am համակարգի միջոցով 08.01.2024թ.-ին, ժամը 14:00-ին: Մասնակցի կողմից ներկայացված էլեկտրոնային հայտը www.armeps.am համակարգի կողմից համարվել է հետագա գնահատման համար ընդունելի:

| Հ / Հ | Մասնակցի անվանումը | ՀՎՀՀ | Հասցե | Հեռախոս | Էլ. փոստի հասցե |
|---|---|---|---|---|---|
| 1 | «ՖԼԵՇ» ՍՊԸ | 01808769 | ՀՀ, ք.Երևան, Ե.Կողբացու 30 | +374 (10) 534233 | flashltdtender@gmail.com |

1.1 Հայտերի վերաբերյալ հարցումների և ներկայացված պարզաբանումների մասին.
Հրավերի վերաբերյալ հարցեր և պարզաբանումներ չեն եղել:
1.2 Ներկայացված բողոքների և դրանց վերաբերյալ կայացրած որոշումների մասին.
Գնման ընթացակարգի շրջանակներում բողոքներ չեն եղել:
1.3 Հակաօրինական գործողություններ հայտնաբերելու դեպքում դրանց և այդ կապակցությամբ ձեռնարկված գործողությունների համառոտ նկարագրի մասին. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:
Այսպիսով, գնահատող հանձնաժողովի կողմից որոշում է կայացվել "Ֆլեշ" ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը հայտարարել հետագա գնահատման համար պիտանի:
*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝0*

**2.Տվյալներ ներկայացված հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին**
Սամվել Խաչատրյան

2.1.Մասնակցի կողմից ներկայացված հայտում հրավերով սահմանված փաստաթղթերը առկա են:
2.2 Մասնակցի կողմից ներկայացված հայտում՝ փաստաթղթերը կազմված են Գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:
Այսպիսով, հայտ ներկայացրած մասնակցի՝ "ՖԼԵՇ" ՍՊԸ-ի հայտը գնահատվում է բավարար:
*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝0*

**3. Հայտերի վերաբերյալ հարցումների և ներկայացված պարզաբանումների մասին**
Սամվել Խաչատրյան

Հարցումներ չեն եղել:
*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝0*

**4. Ներկայացված բողոքների և դրանց վերաբերյալ կայացված որոշումների մասին**
Սամվել Խաչատրյան

Բողոքներ չեն եղել:
*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝0*

<u>5. Գնային առաջարկների մասին</u>

Սամվել Խաչատրյան

5.1 Մասնակիցների կողմից առաջարկված պայմանագրի կատարման գները հետևյալն են.

| Հ/Հ | Չափաբաժնի անվանումը | «ՖԼԵՇ» ՍՊԸ | | Նախահաշվային գինը |
|---|---|---|---|---|
| | | Առաջարկված գինն՝ առանց ԱԱՀ | Առաջարկված գինն՝ ընդհանուր ներառյալ ԱԱՀ | |
| 1 | Բենզին ռեգուլյար, կտրոններով | 3825000 | 4590000 | **4590000** |
| 2 | Դիզելային վառելիք՝ ձմեռային | - | - | **165000** |

5.2 Մինչև հրավերում փոփոխությունների կատարման համար սահմանված վերջնաժամկետը լրանալը, էլեկտրոնային փոստի միջոցով գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից:

5.3 Պատվիրատի և (կամ) գնահատող հանձնաժողովի կողմից ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կայքէջի միջոցով մասնակցի/ների՝ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին բավարարելու մասին հայտով ներկայացված հավաստման իսկությունը ստուգելու վերաբերյալ որոշում չի կայացվել:

5.4 Մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկը ներկայացված է հրավերի պահանջներին համապատասխան, սակայն գերազանցում է նախատեսված ֆինանսական միջոցները:

5.5 Գնային առաջարկ չներկայացնելու հիմքով հանձնաժողովը որոշում կայացրեց հայտարարել 2-րդ չափաբաժնի մասով ԳՀ գնման ընթացակարգը չկայացած՝ համաձայն "Գնումների մասին" ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի՝ Ոչ մի հայտ չի ներկայացվել:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0*

<u>6. Գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին</u>

Սամվել Խաչատրյան

Հիմք ընդունելով մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկը՝ հանձնաժողովը որոշեց հաստատել «ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/04» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի մասնակիցների հայտերի գնահատման արդյունքները.

| Մասնակցի անվանումը | Չափաբաժնի համար | Հայտի գնահատականը |
|---|---|---|
| «ՖԼԵՇ» ՍՊԸ | 1-ին | **բավարար** |

Հանձնաժողովը բավարար է գնահատում նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրի համապատասխանությունը հրավերի պահանջներին:

**Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0**

<u>7.Հաստատել «ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ -24/04» գնման ընթացակարգի ընտրված մասնակցի մասին</u>

Հիմք ընդունելով սույն արձանագրության 6-րդ կետում ընդունված որոշումը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ կետը, այն է. Ընտրված մասնակիցը ճանաչվել է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով՝ ստորև ներկայացվում է «ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/04» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի ընտրված մասնակիցը՝ ըստ չափաբաժնի.

| Ընտրված մասնակից | Չափաբաժնի համար |
|---|---|
| «ՖԼԵՇ» ՍՊԸ | 1-ին |

**Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0**

<u>8. «ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/04» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքները հաստատելու մասին</u>

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջների, այն է՝ անգործության ժամկետը կիրառելի չէ, եթե միայն մեկ մասնակից է հայտ ներկայացրել, որի հետ կնքվում է պայմանագիր, համաձայն անգործության ժամկետ չի սահմանվում <<ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/04>> ծածկագրով ԳՀ ընթացակարգի շրջանակներում:

**Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0**

Ք

9" Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/04 ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ընտրված մասնակիցների հետ գնման պայմանագիր կնքելու հաջորդ աշխատանքային օրը, ժամը 16:00-ին Վեդու բժշկական կենտրոն ՓԲԸ-ի շենքում ՝ Արարատի մարզ գ.Վեդի Գայի 2:

**Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0**

| | | |
|---|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | ____________________ | Ս.Խաչատրյան |
| Հանձնաժողովի անդամներ՝ | ____________________ | Հ.Գաբրիելյան |
| | ____________________ | Ա.Հակոբյան |
| | ____________________ | Ա.Մանուկյան |
| | ____________________ | Գ.Գաբրիելյան |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | ____________________ | Լ.Բաշիկյան |